«MEDI-CAL»-Ի՝ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ՝ (Home Upkeep Allowance) ԾԵՐԱՆՈՑՈՒՄ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Եթե Դուք «Medi-Cal» եք ստանում և գտնվում եք ծերանոցում կամ որևէ այլ բուժական հաստատությունում, հնարավոր է, որ Դուք «Medi-Cal»-ի զեղչ ստանալու իրավունք ունենաք, որը կոչվում է «Home Upkeep Allowance»: «Home Upkeep Allowance»-ը Ձեզ թույլ կտա ամսեկան Ձեր եկամուտից $209 պահել՝ Ձեր տան խնամքի և պահպանության համար, մինչ Դուք ժամանակավորապես բնակվում եք ծերանոցում կամ որևէ այլ բուժական հաստատությունում: «Home Upkeep Allowance»-ը կարող է տրամադրվել մինչև 6 ամիս ժամկետով՝ սկսած այն օրվանից, երբ Դուք փոխադրվել եք ծերանոց:

«Home Upkeep Allowance»-ի իրավունք ունենալու համար՝

- Դուք պետք է նախատեսեք, ծերանոց փոխադրվելուց հետո 6 ամսվա ընթացքում, դուրս գրվել և տուն վերադառնալ.
- Դուք պետք է գրավոր տեղեկանք վերցնեք Ձեր բժշկից, որը կհաստատի, որ Դուք ի վիճակի կլինեք տուն վերադառնալ 6 ամսվա ընթացքում.
- Ձեր կինը/ամուսինը կամ ընտանիքը չպետք է այդ տանը բնակվեն.
- Ձեր տունը պետք է պահվի մինչև Ձեր վերադարձը:

Եթե Ձեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր «Home Upkeep Allowance»-ի վերաբերյալ, կամ եթե ցանկանում եք դիմել նպաստի համար, խնդրում ենք զանգահարել սոցիալական ծառայությունների Ձեր տեղական շրջանային գրասենյակ: